ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ 70-ԱՄԵԱԿԸ

(ԱՊՐԻԼԻ 4)

Մի քանի օր ևս՝ և Խրիմեան Հայրիկը կը տօնէ իւր ծննդեան 70-երորդ տարեդարձը։ Այդ օրը նշանակալի օր է ամբողջ հայութեան համար և մանաւանդ հայ ազգի այն մասի, որի համար տասնեակ տարիներից ի վեր նա ներկայացնում է նորագոյն հայկական ոգու ամենազուտ մարմնացումը։ Նա այսօր, որպէս և անցեալում, ամենահեղինակաւոր, ամենապատկառելի, ամենավստահելի ներկայացուցիչն է այն գաղափարի, որը մի պատրիարքի դարձնում է ներսէս, մի վիպասանի՝ Ռաֆֆի, անյայտին՝ Գօլշեան։ «Մուրճ»-ի խմբագրութիւնը չի կամենում առիթը բաց թողնել, իւր ներկայ համարի ճակատին այն մարդու անունը դրոշմելու, որից նա ստացել է իւր գաղափարի մի մասը։ «Մուրճ»-ի խմբագրութիւնը վստահ է, որ ամեն մարդ, որը գին է դնում Խրիմեանի անունի հետ կապուած ուղղութեան, կը միանայ մեզ հետ՝ մաղթելու հոչակաւոր ծերունուն դեռ ևս երկար կեանք, իւր ծրագրի իրագործումը աւելի առաջացած տեսնելու համար։

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՄԻԱՆԵԱՆՑ